

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/6

13 մայիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արմեն Ասլանյանի 08.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 24.02.2014 թ-ի թիվ 245 որոշման դեմ:

Ա/Ձ Արմեն Ասլանյանի գրությունում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի կողմից 24.02.2014 թ-ին կայացվել է թիվ 245 որոշումը (այսուհետ նաև Որոշում)՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին:

Վարչական մարմինը վարչարարությունը իրականացրել է կուպիտ խախտումներով հետևապես, վարչական ակտը կազմվել է օրենքի սխալ կիրառման և սխալ մեկնաբանման հետևանքով:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակային ուսումնասիրությունից պարզ է դառնում այն հանգամանքները, որոնք կարող են հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար: Սույն դեպքում, վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելը սկսվում է այն գործողությունների սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտ ընդունելուն: Այսինքն, անհրաժեշտ և պարտադիր պայման է վարչական մարմնի կողմից գործողություններ կատարելը վարչական վարույթ հարուցելու համար:

Տվյալ դեպքում անհասկանալի է, թե վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական վարույթը երբ է հարուցվել:

Խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի և 38-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները: Մասնավորապես, վարչական մարմինը, պարտավորված լինելով օրենքներով ապահովել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, չի կատարել այն, որպես այդպիսին չի կատարել գործի քննության, չի լսել գործին մասնակցող անձանց, հայցվորն ընդհանրապես չի իմացել, որ իր նկատմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ, հնարավորություն չի ունեցել մասնակցել վարչական մարույթին և իրականացնել օրենքով իր երաշխավորված իրավունքները, և որպես այդպիսին չի իրականացրել գործի լսումներ:

Սույն վարչական վարույթի մասին վարչական մարմինը չի ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին, որի արդյունքում վերջիններս զրկված են եղել օրենքով սահմանված իրենց իրավունքները պաշտպանել, այդ թվում իրենց վերաբերյալ վարչական վարույթի մասին տեղեկանալու, ծանոթանալու գործի նյութերին, զրկված են եղել վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվեք ու փաստաբանի իրավաբանական օգնությունից, բողոք արվելու վարչական մարմնի գործողությունները:

Վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից Որոշման մեջ նշել է, որ հաստատագրված վճարի գծով՝ 16.704 ՀՀ դրամ առաջացել է 2001 թվականի հաշվարկներից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ պարտավորություններ չեն կարող դրվել այն դեպքում, երբ տվյալ պարտավորությունները հայտնաբերվել են այդ պարտավորությունների առաջացման պահից երեք տարի անց:

Սույն գործում ներկայացվել է 13 տարվա վաղեմության հաստատագրված վճարի մասով "պարտավորություններ", որը հարկերի մասին ՀՀ օրենքի 30.1.րդ հոդվածի ներքո չի կարող համարվել իրավաչափ և օրինական:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ-ի կողմից վարչական ակտը կայացվել 24.02.2014 թ-ին, իսկ կից նյութերը կազմված են 25.02.2014 թ-ին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության արդյունքում պարզ է դառնում այն հանգամանքը, որ վարչական

մարմինը կաշկանդված է գործի փաստական հանգամանքները քննել գործում առկա ապացույցների հիման վրա:

Սույն գործով Որոշման կից ներկայացված մնացորդների վերաբերյալ տեղեկանքը, (որը հանդիսանում է վարչական վարույթի նյութ, այլապես այն կից չէր ներկայացվի) կազմված է 25.02.2014 թ-ին, այսինքն՝ վարչական ակտը կազմելուց մեկ օր հետո:

Այսպիսով, գործում առկա ապացույցները փաստում են, որ վարչական մարմինը վարչարարությունը իրականացրել է խախտումներով: Ավելին, վարչական մարմինը Որոշման մեջ չի անդրադարձել պարտավորությունների գոյացման կոնկրետ ժամանակաշրջանի և կոնկրետ հաշվարկների վերաբերյալ փաստական հանգամանքներին:

Խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես, վարչական մարմինը քննարկման առարկա չի դարձրել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի (11.11.2005թ.) և «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ օրենքներին: Ընդհանրապես չի անդրադարձել այն հարցերին, թե արդյոք վերոգրյալ իրավական ակտերը կիրառելի են այս դեպքում:

Սույն գործով վարչական մարմինը պարտավոր էր կիրառել 11.11.2005 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը:

Հաշվի առնելով վերոգրյալը Ա/Ձ Արմեն Ասլանյանը խնդրում է անվավեր ճանաչել և վերացնել 24.02.2014 թ-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ կողմից կազմված թիվ 245 Որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

2005 թ-ի նոյեմբերի 11-ին ընդունված և 2006 թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՕ-215-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և /կամ/ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող ձեռնարկատերերի վրա:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2006 թ-ի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու /լուծարվելու/ վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած և պետական գրանցման վկայականը /այդ թվում՝ ժամկետային/ հանձնած անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:

Հաշվի առնելով, որ Ա/Ձ Արմեն Ասլանյանը 01.01.2006 թ-ի դրությամբ հաստատագրված վճարի գծով ունեցել է 16.704 դրամ պարտավորություն /ապառք՝ 7.800 դրամ, տույժ՝ 8.904 դրամ/, Շենգավիթի հարկային տեսչությունը 09.06.2006 թ-ին ք.Երևան, Նոյեմբերյան 109 հասցեով, պատվիրված ծրարով, Արմեն Ասլանյանին ուղարկել է հիշեցման թերթիկ (ծանուցման ապացույցն առկա է), որով նրան իրազեկել է վերը նշված օրենքի և օրենքով սահմանված արտոնությունների մասին, միաժամանակ առաջարկելով նշված արտոնությունից օգտվելու համար մինչև 2006 թ-ի հուլիսի 1-ը վճարել պարտավորությունը և վճարման անդորրագիրը ներկայացնել հարկային տեսչություն, որի դեպքում նրա նկատմամբ որպես անհատ ձեռնարկատեր կսկսվի լուծարման /գործունեության դադարեցման/ գործընթացը (ծանուցումը առկա է):

Ա/Ձ Արմեն Ասլանյանը պարտավորության գումարը չի վճարել, գործունեությունը դադարեցնելու /լուծարվելու/ վերաբերյալ գրավոր դիմում հարկային տեսչություն չի ներկայացրել, ինչպես նաև գրանցման վկայականը չի հանձնել, որի հետևանքով վերը նշված օրենքով

սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք չի ունեցել, քանի որ չի բավարարել Օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջներին:

Նշված հանգամանքները հաշվի առնելով Օրենքով սահմանված արտոնությունը նրա նկատմամբ չի կիրառվել:

2012 թ-ի դեկտեմբերի 19-ին ընդունված և 2013թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՕ-258-Ն ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների համաձայն՝ անհատ ձեռնարկատերերն ազատվում են մինչև 2008թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների /այդ թվում՝ հաշվարկված և չվճարված տույժերի/ վճարումից:

Նշված հոդվածների կիրառմամբ Ա/Ձ Արմեն Ասլանյանը ազատվել է մինչև 2008 թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների /այդ թվում՝ հաշվարկված և չվճարված տույժերի/ վճարումից՝ ընդհանուր գումարով 557.118 դրամ, որից ապառք՝ 360.000 դրամ, տույժ՝ 197.118 դրամ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարի պարտավորությունն առաջացել է մինչև 2013թ-ի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ մասի համաձայն 2009 թ-ի հունվար ամսից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսը ներառյալ հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարի նվազագույն գումարներից և այդ գումարների նկատմամբ նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկված տույժերից:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն. «Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի կողմից 24.02.2014 թ-ին ընդունվել է թիվ 245 որոշումը՝ Ա/Ձ Արմեն Ասլանյանից 388.106 դրամ պարտավորության գումարը գանձելու մասին, որի օրինակը պատշաճ ուղարկվել է Ա/Ձ Արմեն Ասլանյանին:

Սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ներկայացվել են քննարկման Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Ա/Ձ Արմեն Ասլանյանի 08.04.2014 թ-ի գանգատը մերժել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ